# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսթի 1

№ 1455-Ա « 19 » դեկտեմբերի 2025 թ.

«ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-26/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կողմից ներկայացված 2026 թվականի կարիքների համար Երևան քաղաքի վարչական շրջաններում կոյուղագծերի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների գնման հայտը.

1. Ձևավորել «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-26/2» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

| | |
|---|---|
| Ա. Հովհաննիսյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսաապահովման բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի նախագահ/ |
| Ա. Համբարձումյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսաապահովման բաժնի առաջատար մասնագետ |
| Ա. Գևորգյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի առաջատար մասնագետ |
| Ա. Հարությունյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի առաջատար մասնագետ |
| Ս. Հարությունյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսաապահովման բաժնի առաջին կարգի մասնագետ |

2. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության աշխատանքների գնումների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Պապյանին:

3. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունը

ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի հ.1, հ.120 սենյակ):

4.Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6.Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**